ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2104 - Ա **06 ապրիլի 2009թ.**

ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 42 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՅԱՆԵ ԱՇՈՏԻ ԱՎԱԳՅԱՆԻ, ՄԱՐԿՈՍ ՆՈՒԲԱՐԻ ԱԿՈՂԼՅԱՆԻ, ՌՈՒԶԱՆՆԱ ՆՈՒԲԱՐԻ ԱԿՈՂԼՅԱՆԻ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գայանե Աշոտի Ավագյանի (ծնված 02.11.1969թ.), Մարկոս Նուբարի Ակողլյանի (ծնված 06.03.1958թ.), Ռուզաննա Նուբարի Ակողլյանի (ծնված 06.02.1962թ.), Տիգրանուհի Ստեփանի Ավագյանի (ծնված 09.04.1925թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Բուռնազյան փողոցի հ.42 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 265.68քմ, որից 213.12քմ մակերեսով հողամասը Գայանե Աշոտի Ավագյանին, Մարկոս Նուբարի Ակողլյանին, Ռուզաննա Նուբարի Ակողլյանին, Տիգրանուհի Ստեփանի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 52.56քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1993 թվականը, Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 25.08.2008թ. քաղաքացիական գործով կայացված ԵԷԴ/0872/02/08 վճիռը, 16.12.2004թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման 19.11.2008թ. հ.6296ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/142 գրությունները, Երևանի քաղաքապետարանի <<Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 12.03.2009թ. հ.20-Ել-1701 եզրակացությունը, համաձայն որի Բուռնազյան փողոցի հ.42 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Բուռնազյան փողոցի հ.42 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գայանե Աշոտի Ավագյանի, Մարկոս Նուբարի Ակողլյանի, Ռուզաննա Նուբարի

Ակողլյանի, Տիգրանուհի Ստեփանի Ավագյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 213.12քմ մակերեսով հողամասին կից 52.56քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 52.56քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Բուռնազյան փողոցի հ.42 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Բուռնազյան փողոցի հ.42 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Մարաշ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գայանե Աշոտի Ավագյանի, Մարկոս Նուբարի Ակողլյանի, Ռուզաննա Նուբարի Ակողլյանի, Տիգրանուհի Ստեփանի Ավագյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Էրեբունի թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**